

«ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ». ԳՈՒԿ. ԺԲ. 16:

ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՄԱՅԻՍ 1, 1886


ԹԻԻ 5

ՈՒՐՈՒԹԻՔ ԲԵՐԳԸ

Այս է մին Անգղիոյ ընտրելագոյն հին բերդերէն որ մնացած են ցարդ, բայց անոր բոլոր մասերը չունին հաւասար հնութիւն: Անոր աշտարակաց մին կառուցուեցաւ ասկէ իբր 500 տարի առաջ. կայ ուրիշ մի ևս որ է աւելի հին, բայց ոչ ոք գիտէ թէ որչափ: Բերդին միւս մասերը նորոգուած են շատ ետքը և սակայն հին ձևը պահուած է: Հոն այցելողներուն կը ցուցուին շատ մը հետաքրքրաշարժ նշխարք հնութեան և պատկերք: Այցելուք կը տեսնեն, ի մէջ այլոց, անկողինը որոյ մէջ անգամ մը ննջեց Աննա թագուհին, որ կ'ըլլէր Անգղիոյ 1702 է մինչև 1714, և Օլիվըր Բրոուուէլի սաղաւարտը, որ թէպէտ չունէր թագաւոր անուն կը վարէր սակայն արքունի իշխանութիւն Չարլզ Ա. թագաւորին գլխատուելէն ետքը, նաև ճարտարարուեստ սեղան մը թանկագին քարերով ապուցեալ և պնեալ որ կ'ըսուի թէ կ'արժէ 10,000 Անգղ. ոսկի: Քանի մը տարի առաջ բերդը բռնկեցաւ և հին նշխարներէն ոմանք կորսուեցան հրդեհը մարելէ առաջ:

Խորհրդի, Մէրտնի, Ամստիոյ և ուրիշ քաղաքաց բերդերն այն վիճակին մէջ յորում կը գտնուէին հարիւրաւոր սարիներ առաջ: Ինչպէս ամուր էին անոնք պաշտպանել այն յարձակողաց դէմ որ կը պատերազմէին գերարդով և նետիւ:

Հնար էր յերկիր կործանել քանի մը ժամ ամբակոծելով: Յիմարութիւն պիտի թուէր հին ժամանակի իշխանի կամ ասպետի եթէ ոք ըսէր անոր մինչ կառուցանէր պարիսպներ 15—20 տար թանձրութեամբ, թէ հողը աւելի զօրաւոր է քան գրարը: Բայց այս է իրողութիւնը: Թնդանօթի գնտակը, որ ջախջախելով կտոր կտոր կ'ընէ պարսպաց քարերը, կը թաղուի հողաբլրոց և հողակերտ թմբոց մէջ և փսաս չընեն անոնց: Աղէկ կ'ըլլար եթէ ոմանք մարդիկ ծեր և նորահասակ, ունենային հողին տեղի տուող բնութիւնն իրենց վարուց մէջ: Անոնք զերծ պիտի ըլլային կրելէ նեղութեանց շարք սաստիկ հարուածներէն զորս կ'ընդունին աշխարհիս մէջ:



ՈՒՐՈՒԹԻՔ ԲԵՐԳԸ

Յաւալի է որ թուրքիոյ ընտիր բերդերէն ոմանք կարելի եղած չէ նորոգել և վերածել անոնց նախնի վիճակին: Կ'արժէր երկար ճանապարհորդութիւն ընել այցելելու համար

Ինչ պատերազմներ եղած են անոնց քովերը, և որպիսի դորձք անդթութեան գործուած են անոնց ներսի կողմերը: Բայց աշխարհ այնչափ յառաջադիմած և փոխուած է այժմ որ այնպիսի բերդեր ոչ ևս բնաւ պիտի չլինուին: Անոնց ամբազոյնն իսկ


ՈՒՎ ԷՐ ԱՅՆ ՈՐ ԿՐԵՑ ԱՄԵՆՈՒՆ ՈՏՆԱԿԱՊԵՐԸ
Ասկէ բաւական ժամանակ առաջ պատերազմ եղաւ Հնդկաստան Անգլիացոց և բնիկ իշխանաց միոյն մէջտեղ որ կը կոչուէր Թիփու Մալիպ: Անգամ մը քանի մը Անգլիացի սպայք բռնուեցան գերի, և անոնց մէջ կար ոմն Պէյրտ անուն: Օր մը բնիկ սպայից մին բերաւ ոտնակապեր իւրաքանչիւր գերուոյ համար, վիրաւորեցրց համար ևս: Պէյրտ սաստիկ վիրաւորուած էր և կը չարչարուէր ցաւէ և վատառողջութենէ: Ալեւոր սպայ մը ըսաւ բնիկ սպային, «Գուն պիտի չդնես չղթան

այդ վերաորեալ երիտասարդին ոտքը, այնպէս չէ:” “ձեռք այնչափ զոյգ ոտնակապեր կան որչափ կարանաւորք, և պիտի դրուին իւրաքանչիւրին ոտքերը,” պատասխանեց միւսը: “Ուրեմն,” ըսաւ Մնդդիացի սպայն, “դիր իմ ոտքերս երկու զոյգ, ես կը կրեմ թէ՛ իմ և թէ՛ անորը:” Պէյրտ ապրեցաւ և ձեռք ձգեց իւր ազատութիւնը, ապրեցաւ և մասն ունեցաւ առնչու նոյն իսկ այն քաղաքը, բայց անոր ազնիւ բարեկամը մեռաւ բանտին մէջ: Երկու զոյգ ոտնակապեր կը կրէր նա: Բայց ի՞նչ, եթէ կրէր ոտնակապերը բոլոր անոնց որ էին բանտին մէջ: Ի՞նչ, եթէ նա փոխանակ ինքն ըլլալու բանտարկեալ, ըլլար ազատ և մեծ անձ, և թողած ըլլար փառաւոր պալատ մը որպէս զի բնակէր անոնց զարչելի բանտին մէջ, կրէր անոնց ոտնակապերը, տանէր անոնց հարուածներուն, չարչարուէր և մեռնէր փոխանակ անոնց որպէս զի անոնք ազատ արձակուէին: Սակայն եղաւ այսպիսի բան մը: Ամէն անոնց որ կ'ընդունին Աստուծոյ Որդւոյն շնորհքը, կը խորտակին շղթաները և բանտին դուռը լայն կը բացուի:

ՀԻՄՆԱԿԱՅԱ ԼԵՐԻՆՔ

Թերևս մեր փոքրիկ ընթերցողներէն ոմանք ժամանակ ժամանակ կ'ուզեն որ բոլոր լերինք առնուէին և նետուէին ծովը: Երբ կը ճանապարհորդէ ոք և կը տեսնէ իւր առջև ճամբայ լերան վրայ որ կ'ելլէ վեր և կը բարձրանայ հետզհետէ, կը խորհի թէ ո՞րչափ պիտի յոգնի մինչև հասնի լերան գագաթը, կամ եթէ ձի հեծած կ'ընէ իւր ճանապարհորդութիւնը, կը խորհի թէ ո՞րչափ անգամ եղկելի կենդանին պիտի կանգ առնու հեւալով չունչ առնելու համար: Բայց լերանց օգուտը խիստ մեծ է, և անոնք այնպէս անդրդուելի հաստատուած են իրենց տեղերը որ հնար չէ անոնցմէ ձանձրացող տղու մը զանոնք հրելով գլորել ովկիանոսին մէջ: Շատ տաղաւալի պիտի ըլլար աչաց եթէ բոլոր

աշխարհ լինէր մի անհուն դաշտ տափարակ, և յայնժամ պիտի չգտնուէին ահագին ընդունարանք ձեանց և անձրևոյ համար ուր ամբարուէին, և որոյցմէ վազելով ձեանային աղբերք և վտակք դաշտաց մէջ: Բայց ի՞նչպէս գոյ եղան լերինք: Անոնք յառաջ եկան ստակալի յեղափոխութիւններէ ի բնութեան թերևս հարիւր հազարաւոր տարիներ առաջ: Երբեմն կը զգանք երկրաշարժի ցրնցմունք, և երբեմն հազարաւոր կեանք



ՀԻՄՆԱԿԱՅԱ ԼԵՐԻՆՔ

քեր կը կորուսին անկէ, բայց անոնք ոչինչ են բաղդատելով այն երկրաշարժից հետ որք ժամանակաւ սասանեցուցած են երկրագունտս: Աշխարհս որ ժամանակաւ էր հալած գունտ, բաւական պաղելէն ետքը այնչափ որ անոր մակերեսը կարծրանար, երկրաշարժք հետզհետէ պատահելով նետեցին ժայռերը վեր և ձեւացան լեռանց գագաթներ և շղթաներ, և այնպէս մնացին անոնք: Գիտե՛ք թէ Հիմնայայ լերինք բարձրագոյն լերինք են երկրագնդոյս վրայ: Եթէ շինէիր գաւազան կամ ձող 5 3/4

մըն երկայնութեամբ կամ իւր երկու ժամու ճանապարհի հեռաւորութեան չափ երկար, և կանգնէիր զայն ուղղահայեաց ովկիանոսին եզերքը, անոր վերի ծայրը հաւասար կ'ըլլար ի վերէօթ լերան գագաթան որ է Հիմնայայ լերանց շղթային մէջ և բարձրագոյնն յաշխարհի:

Մարդիկ որ կը տեսնուին պատկերին մէջ, չեն ելլեր Հիմնայայէ վեր, այլ անոր առջև աւելի ցած լերանց շղթայէ գէպ հարաւ, որմէ պիտի կարող ըլլան տեսնել զՀիմնայայ: Եթէ մարդ ելլէ Իփերէսթ լերան գագաթը, պիտի չուզէ մնալ հոն երկար: Վասն զի ոչ միայն պիտի գտնէ զայն սաստիկ ցուրտ, այլ օդն այնչափ անօտը որ դժուարաւ պիտի ըլլայ կարող առնուլ շունչ: Օդոյ անօտութեան մի այլ արդիւնքն ևս այս պիտի ըլլայ հոն որ երկինք պիտի երևին գրեթէ սև փոխանակ կապոյտ գունոյ: Եթէ չես հաւատար ասոր, հոն գնա և տես անձամբ:

ԳԻՏԱՊԱՐՏԵԼՈՅՆ ՌՊՊԻՆ

Օր մը քանի մը մարդիկ որ գատապարտուած էին ծանր աշխատութեան հասարակութեան վերաբերեալ գործոց մէջ այլ և այլ յանցանաց համար, կը զբաղէին նորոգել վիէննայի փողոցներէն մին: Կ'անցնէր անկէ վայելչաբէմ, լաւ հաղուած երիտասարդ մը, որ կանգ առաւ դատապարտելոց միոյն քով, գրկեց զնա սիրով և գնաց իւր ճամբան: Գաղաքային սպայ մը կը նայէր այդ միջոցին իւր տան պատուհանէն և շատ զարմացաւ տեսնելով զայն: Կոչել տուաւ երիտասարդն իւր քով և ըսաւ, «Բարեկամ, շատ տարօրինակ բան էր որ ըրիր դու գրկելով փողոցին մէջ՝ դատապարտեալ յանցաւոր մը: Մարդիկ ի՞նչ պիտի խորհին քովրադ:» Երիտասարդը չտուաւ պատասխան քանի մը վայրկեան, բայց շուտով ինքն իրեն գարով ըսաւ. «Տէր իմ, ես հետեւեցայ պարտականութեան զգացման և իմ սրտին»

միայն, վասն զի այն դատապարտեալն էր ի հայրս :”

Սպային զգացումները շարժելով այս խօսքերէն և զմայելելով երիտասարդին ազնիւ վարմունքին վրայ փութաց պատմել կայսեր ինչ որ պատահած էր : Ինքնակալը ճանչցաւ որդիական այս գործին զեղեցկութիւնը և տուաւ դատապարտելոյն որդւոյն կարևոր պաշտօն մը : Իսկ և իսկ ուղեց ցուցնել թէ յանցանաց պատիժը պարտի ըլլալ յանցաւորին միայն և ոչ անոր վերաբերեալն որուն ևս, և թէ ոչ ինչ պարտի արգելել պահպանութիւնն աստուածային պատուէրին,

«Պատուէ քու հայրդ ու մայրդ :”

ՈՍԿՈՑ ՀԱՆՔ

ԵՒ ԶԱՅՆ ՄԱՔՐԵԼՈՒ ՏՈՒՆ

Պատկերին մէջ տեսնուած տունը թէպէտ կ'երևի աղքատ մարդու մը տան պէս, սակայն այնպէս չէ, այլ յատուկ շէնք մըն է, որուն մէջ կը դտեն պատուական ոսկին աւաղէն որով խառնուած է մենք շատ անգամ կը զրոնենք ամենապատուական բաները աննշան բաներու մէջ :

Սիպերիայի Քարա Նա հանգին մէջն է այս տունը, և այն հանքերը որ մօտ են տանը, կը վերաբերին Ռուսիոյ կառավարութեան և հոն կ'աշխատին եղեռնագործ անձինք : հանքը թէև շատ արդիւնաւոր չէ՛ բայց և այնպէս բաւական չափ կը բերէ : այս բան տարկեալք կ'աշխատին հոն ֆետրովար 15 էն մինչև Նոյեմբեր 15, և տարուան մնացած երեք ամիսներուն մէջ գործերէ կը դադարին, քանզի ցուրտը խիստ սաստիկ և ձիւնը շատ է : Ամէն օր կը գործեն 13 ժամ կերակուրներու ատեն քիչ մը հանգիստ առնելով :

պահանջող զինուորներու հսկողութեան տակ մնն, և ամէն բանտարկեալի վրայ կը դնեն ծանր շղթայ մը : Եթէ աղէկ վարուի իւր գործերուն մէջ, կը վերցնեն զայն և կը դնեն աւելի թիւթիւր, և երբեմն կը վերցունեն բոլորովին իսկ : Թէպէտ բաւական ծանր է իրենց բաժինը, սակայն աւելի աղէկ է պարապիլ օգտակար մետաղ մը հանելու զբաղելով քան թէ ապրելով գողութեամբ և մարդասպան

նութեամբ ինչպէս կ'ընեն անոնցմէ ոմանք :

Թէ՛ մարդոց կառավարութեան տակ և թէ՛ Աստուծոյ իշխանութեան ներքեւ, «անօրէններուն ճամբան դժուարին է :”

ԴԻՊՈՒՍԾ ՄԸ

Երիտասարդ մը գնաց Նոր Եորքի մեծագոյն վաճառատուններէն մին և խնդրեց որ պաշտօն մը տրուի իրեն վաճառատան մէջ, և ըսուեցաւ անոր որ դարձեալ դայ հոն :

Նոյն օրը երբ երիտասարդը կ'անցնէր փողոցէ մը, ծերունի կին մը որ

այս ինչ փողոցին մէջ, թափած ցրուած խնձորները ժողվելով անոր սակաւին մէջ, և զարմանօք իմացաւ թէ այդ դէպքն եղած էր պատճառ անոր ընդունուելուն այն վաճառատան մէջ, թէպէտ առաւել քան հարիւր ուրիշ անձինք հետամուտ էին մտնել այն պաշտօնին :

Երիտասարդը և պատանիք, քիչ տեղեկութիւն ունիք դուք թէ ո՞վ կը տեսնէ ձեր մարդասիրական գործերը : Եւ մինչև իսկ այնպիսիք կը տեսնեն և կը հիանան այն գործոց վրայ զորս կատարելու նեղութիւնը չեն յանձն առնուր իրենք անձամբ :



ՈՍԿՈՑ ՀԱՆՔ ԵՒ ԶԱՅՆ ՄԱՔՐԵԼՈՒ ՏՈՒՆ

ունէր ձեռքը սակաւ խնձորով լի, մինչ կը ջանար փողոցին միւս կողմն անցնիլ, կառքի մը զարնուելով ինկաւ դետին և ձեռքի սակաւին մէջ զըտնուած խնձորները ցիր և ցան եղան փողոցը :

Երիտասարդը յառաջ քալեց անցորդամբռոխ մէջէն, օգնեց ծերունի տիկնոջ, ժողվեց և դբաւ խնձորները սակաւին մէջ և գնաց իւր ճամբան, և մտցաւ այն արկածը :

Երբ դարձեալ եկաւ վաճառատունը, հարցուեցաւ թէ ինչ թոշակ կ'ուղէր, և ընդունուելով անմիջապէս, մտաւ աշխատել հոն :

Իբր տարի մը ետքը օր մը կանչուելով մեկուսի, հարցուեցաւ անոր թէ կը յիշէր արդեօք որ օգնած էր խնձոր վաճառող ծերունի կնոջ մը քաղաքին

ԶԱՐԲԱՆԱԼԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Կենդանաբանական պարտեզներուն մէջ, ի ֆարիզ, սովոր էին պահել վայրագ դեռահաս առիւծ մը, որուն միայնակ բարեկամն էր խեղճ շիկ մը, որ դաղտագողի մտած էր գաղանաւնոցը : և երբ հալածուեցաւ, դիմեր էր առիւծի վանդակը, ուր ի զարմացումն պահապանաց ընդունուեցաւ սիրով : Թերևս առիւծը՝ տեսաւ թէ շիկն և ինքն ունէին նոյն թշնամիներ : Ի՛նչ և իցէ առիւծն՝ ընդունեց շիկը իբր իւր բարեկամը, և չէր տար թոյլ որ հանուի անկէ : Առաւօտ մը, բարեբաղդաբար, դեռ այցելու չեկած, վանդակին դուռը անհոգութեամբ հաստատուած չըլլալով, առիւծը հնար մը գտաւ զայն բանալու և վաղեց դուրս : Դիւրին է

երևակայել չլիթութիւնն և սարսափը՝ որ անկէ յառաջ եկաւ : Պահապանք փախան իրենց ապահովութեանն համար, և յաղթանդամ գաղանը եղաւ ճշմարտապէս անդւոյն միապետը :

Առաջին խորհուրդն եղաւ հրայանով զարնել զանիկա անմիջապէս, բայց խորամանկ պահապաններէն մին առաջարկեց հնար մը յաղթահարել զայն : Այս մարդը տեսեր էր որ շնիկը կը մնար վանդակին մէջ ետևի կողմը, անցաւ այն կողմը և բռնելով եղկելի կենդանին, սկսաւ ծեծել զայն : Շնիկը անտարակոյս, ողորմելի կերպիւ կը ճէր :

Երբ առիւծը լսեց առաջին ձայնը, կանգ առնելով ունին դրաւ, մինչ վազրի մը վանդակին դիմացը զայն ըլլալով պոչը կողերուն կը զարնէր : Քանի որ ճիշդ կը շարունակէր, հզօր գաղանը վայրագութեամբ ոտտատեց դէպ յիւր վանդակը, և տեսնելով որ պահապանը կը ծեծէ իւր բարեկամը, մտաւ ներս :

Գուռը անմիջապէս գոցուելով հաստատուեցաւ . և առիւծը տեսաւ թէ բարեկամութիւն ցուցնելով կորսնցուցած էր իւր աղատութիւնը : Ճարտարամիտ պահապանը վարձատրուեցաւ լիուրի . և ի փոխարէն իւր ծեծելուն շնիկն եղաւ սիրոյ առարկայ, և կը անուցուէր պատուական մտով :

ԱԶՆԻԻ ԹԱԳԱՒՈՐ ՄԸ

Գրեթէ չորս հարիւր տարիներ անցած են յորմէ հետէ Շուէտի մէջ ծնաւ մանուկ մը որ կոչուեցաւ «կուստափոս» :

Փոքրիկ աղկիւր կը մեծնար, և որչափ կ'անցնէր ժամանակ, այնչափ արագ քայլ կ'առնոյր իւր ուսմանց մէջ, և ցոյց կու տար այնպիսի աղնիւ բնութիւն, որ մեծ յոյսեր կու տար :

Երիտասարդ էր նա երբ Շուէտ յաղթուեցաւ անգլոթ բռնաւորէ մը որ էր Գրիստիանոս թագաւորն Տանիմար գայի : Կուստափոս՝ մատնուելով անոր ձեռքն ինկաւ, և կալանաւոր տարուեցաւ Տանիմարգա :

Ամիսներ անցան . բայց կուստափոս չէր կրնար մտնալ իւր սիրելի հայրենիքը և շատ տրտում էր : Սկսաւ խորհել և փախչելու ճամբայ մը հնարել : Օր մը, երբ ոչ ոք կը տեսնէր զնա, գիւղացիի հանդերձ այսինքն կարճ հատիկ և կտր գլխարկ հագնելով, արագ

արագ կ'երթար ճամբայէ մը ուր շատ անցու դարձ չէր ըլլար և եկաւ մինչև Լուպէք :

Երբ Գրիստիանոս թագաւորն իմացաւ թէ կուստափոս փախած է, լըրտեսներ խրկեց ետևէն մեծ վարձք խոստանալով անոր գլուխը բերողին :

Կուստափոս ո՛րչափ յառաջ կ'երթար իւր ճամբուն մէջ, այնչափ մեծ վտանգներ կը շրջապատէին զնա միշտ : Թագաւորին զինուորները ամէն տեղ կը փնտռէին զնա : Կուստափոս բոլորովին փոխեց իւր կերպարանքը . և գիւղացիք՝ անոր ճամբորդութեան միջոցին, ժամանակ ժամանակ կը թաքուցանէին զնա երբեմն իրենց տանց և երբեմն անտառներուն մէջ :

Մինչ Սուէն Էլֆոսըն անուն անձի մը տնակն էր, Գրիստիանոսի լրտեսներէն ոմանք խմանալով անոր ապաւինած տեղը, գացին ետևէն : Տունը մտնելով սկսան հարցաքննել Սուէն Էլֆոսընի կինը : Կուստափոս կեցած էր անոր քով, և իւր թշնամիք չկատարուեցան թէ աղտոյի և բիրտ հաղուստներով հաղուած երիտասարդը կրնար ըլլալ այն զոր կը փնտռէին շատ անձկանօք : Բարի կինը հաց կը ձգէր փուռը երբ մարդիկը հարցուցին թէ «կուստափոս ո՛ր է քեզ :» Եւ պատասխանելէն առաջ, վերցուց հացի թին և կուստափոսի կունակին սաստիկ հարուած մը տուաւ պոռալով, «ինչո՞ւ ապշած կը նայիս օտարականաց վրայ, զնա՛ կալը և ցորեն ծեծէ :»

Այս կերպով կասկածը վերցաւ կուստափոսի վրայէն, որ փախաւ ածապարանօք, և լրտեսները թողուցին գացին : Անոնք չը խորհեցան թէ կուստափոս կրնար ըլլալ այն մարդը որուն հետ այնչափ բրտութեամբ վարուած էր գիւղացւոյն կինը :

Անկէ ետքը Սուէն Էլֆոսըն չէր կարծեր թէ իւր անախը ապահով տեղ է փախտականին համար, և խմաստութեամբ որչեց որ զնա մի քանի մղոն հեռի խիտ անտառ մը տանի : Բայց քանի որ այնչափ շատ Տանիմարգայի կային շրջակաները, գժուարին բան էր զնա հոն հասցունել : Հանճարեղ Էլֆոսըն շուտով գտաւ հնար մը : Ըսաւ կուստափոսի որ պառկի իւր սայլին մէջ, և չոր խոտով ծածկեց վրան, և համարձակ ելաւ քաղաքէն երթալ դէպ անտառը :

Յանկարծ հանդիպեցան խումբ մը Տանիմարգայի զօրք որ անձկանօք կը փնտռէին զկուստափոս : Անոնք կը փախաքիին Գրիստիանոս թագաւորին

ոսկւոյն զոր խոստացած էր անոր գլուխը տանողին, և որչա՞ծ էին ձեռք բերել զայն :


Երբ պատահեցան Էլֆոսընի, քիչ մը կասկածեցան թէ, գուցէ սայլին մէջ չոր խոտին ներքև մէկը պահուած է . և իւրաքանչիւր զինուոր մինչ կ'անցնէր, իւր երկայն նիզակը կը մտէր խոտի դէզին : Կուստափոս չարաչար վերադարձաւ էր սրունքէն, բայց չէր շարժեր և ձայն չէր հաներ : Նոյն առտն Էլֆոսըն ամենայն հանգարտութեամբ կառքը կը վարէր յառաջ, և այնչափ անպիթ կ'երևէր որ իբր թէ չունէր ուրիշ նպատակ բաց ի շուկան տանելէ իւր խոտը : Տանիմարգայիք անցան գացին . և Էլֆոսըն յանկարծ տեսաւ արեան կաթիլները որ կը կաթէին սայլէն և կը ներկէին ձիւնը : Կեցաւ և հանելով զկուստափոս խնամով նայեցաւ վերքին, և փաթթեց զայն : Կը վախնար թէ թշնամիք պիտի տեսնէին արևը ձեան վրայ, և անով պիտի հետևէին իրենց հետքին : Կասկածը փարատելու համար քաջեց դանակը և իւր ձիուն սրունքին մէկ կողմը կտրեց, որպէս զի եթէ հարկ ըլլայ, ցուցնէ այս վերքը իբրև պատճառ ձեան ներկուելուն :

Կուստափոս վերջապէս Տորին հասաւ . գրդուեց իւր հայրենակիցները ապրտամբիւ և իւրաց թօթափել Տանիմարգացւոյ լուծը : Նորա ետանդը և ճարտասան խօսուածքը զարմանալի ազդեցութիւն ունէին . հարիւրաւոր հարստահարեալ Շուէտացիք հաւքուեցան անոր շուրջը, և փոքրիկ բանակ մը կազմուեցաւ :

Քանի մը ամեն Տանիմարգայիք արտաքուտեցան Շուէտէ . և իրենց դեռահաս իշխանը եղաւ ազգին յոյժ սիրելին :

Կուստափոս վաղա պակուեցաւ թագաւոր յամին 1523 : Նորա առաջին գործն եղաւ երթալ Եկեղեցի և ծընրադրելով առաջի Տեառն Զօրութեանց, ինդրել առաջնորդութիւն :

Կուստափոս իշխանութիւն վարեց քառասուն տարի . և Շուէտի բարօրութեանն համար ըրաւ աւելի քան ու կցէ ուրիշ իշխան մը :



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԹՅՈՒՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌԳՐ ԳՅԱՆՅԱՆՆԵ